Ալեքսանդր Մակեդոնացու գրված երկրները

Այս քարտեզն Ամստերդամում լատիներենով հրատարակված Ատլասի էջերից մեկն է: Այն ներկայացնում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը մինչև Հնդկաստան: Քարտեզի վրա նշված է Մեծ Հայքը:

Ալեքսանդր Մակեդոնացու գրված երկրները
Աբրահամ Օրթելիուս, 1595 թ.
Բրիտանական գրադարան, Լոնդոն

«Սուրբ Երկիր» այլ կերպ՝ «Դրախտ» կամ «Եդեմի պարտեզ»

Քարտեզն ընգրկում է Միջերկրական ծովի և Պարսից ծոցի միջև ընկած շրջանը և ականավոր Եդեմը, որը գտնվում է Բաբել (Բաբելոն) քաղաքի մոտակայքում: Գեղեցիկ զարդարված վերնագիրը երկու կողմից շրջապատված է Եդեմի տեսարանների պատկերներով: Քարտեզն ինքնին, համատեղելով իրական և բիբլիական աշխարհագրությունը, հիանալի է ստեղծված: Այստեղ կգտնեք Նոդի Երկիրը, Եդեմը, Բաբելոնի աշտարակը և այլ կիսաառասպելական վայրեր: Այս քարտեզը կազմվել է Վիշերի կողմից, որպես հինգ մասից բաղկացած քարտեզների շարքի մի մաս, նախատեսված Աբրահամ Վան Դեն Բրոքի 1657 թ. Աստվածաշնչում ընգրկելու համար: Սա քարտեզների այս կարևոր շարքի առաջին հրատարակությունն է, որը հիմք է հանդիսացել 18-րդ դարում հայտնված բազմաթիվ այլ աստվածաշնչյան քարտեզների:

«Սուրբ Երկիր» այլ կերպ՝ «Դրախտ» կամ «Եդեմի պարտեզ»
Նիկոլաուս Վիշերս, 1657 թ.

Երկրային դրախտը

Այս քարտեզը պատրաստել է անգլիացի քարտեզագետ Էմանուել Բոուենը: Այն ևս հիմնված է կրոնական հավատալիքների վրա: Երկրային դրախտը՝ Եդեմը, ներկայացված է Հայաստանի տարածքում՝ Վան և Կապուտան լճերի միջև: Այստեղ նշված են աստվածաշնչյան դրախտից դուրս եկող չորս գետերը՝ Արաքսը (Գիհոն), Փիսոնը, Եփրատը և Տիգրիսը: Քարտեզի կենտրոնական մասում Արարատ լեռն է:

Երկրային դրախտի քարտեզ
Էմանուել Բոուեն, 1780 թ.
Ռուբեն Գալչյանի անձնական հավաքածու, այժմ՝ Մատենադարանում

Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխահագրաց

18-րդ դարում Վենետիկում լույս է տեսել Հայաստանի քարտեզը, որն ըստ քարտեզագետների և աշխարհագրագետների կարելի է համարել Շիրակացու “Աշխարհացույցի” բացակայող քարտեզին փոխարինողը:

Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխահագրաց
Վենետիկ 1751 թ.
Ռուբեն Գալչյանի անձնական հավաքածու

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

ԱՏԼԱՍ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԻԿԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԿԱՏՐԻՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԻԼԻ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՅՈՒԼՅԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԼԻ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀԵՐՄԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Բաբելոնյան կավե սալիկ, մ. թ. ա. 6-րդ դար

Մեզ հասած աշխարհի ամենահին աշխարհագրական ցույց քարտեզը բաբելոնյան քարտեզն է, որը պատկերված է կավե սալիկի վրա: Քարտեզը գտնվել է Իրաքի տարածքից 19դ դարում: Այժմ այն պահվում է Բրիտանական թանգարանում:

Բաբելոնյան կավե սալիկը թվագրվում է մ. թ. ա. 6-րդ դարով: Ասորական և Բաբելոնյան հին աղբյուրներում Արարատյան թագավորությունը հիշատակվում է որպես Ուրարտու: Հենց այս անվամբ էլ այն նշված է աշխարհի հնագույն քարտեզի վրա: Նշված պետություններից միայն Հայաստանը մինչ օրս գոյություն ունի: Մնացած բոլորը վերացել են աշխարհի քարտեզից:

Բաբելոնյան կավե սալիկ, մ. թ. ա. 6-րդ դար

Բրիտանական թանգարան, Լոնդոն

Հերոդոտոս, մ. թ. ա. 5-րդ դար

Աշխարհի քարտեզն ըստ Հերոդոտոսի: Վերակազմությունը՝ Չարլզ Մյուլլերի՝ հրատարակված Սմիթի ատլասում: Ժամանակին գոյություն ունեցող երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է կենտրոնական դիրք:



Հերոդոտոս, մ. թ. ա. 5-րդ դա

Սմիթի ատլաս, Բրիտանական թանգարան, Լոնդոն, 1874 թ.

Էրատոսթենես (մ. թ. ա 3-2 դար)

Էրատոսթենեսի աշխատությունների հիման վրա գերմանացի քարտեզագետ Ֆոն Սպրուների վերակառուցած քարտեզը (1855 թ.)



Էրատոսթենես (մ. թ. ա 3-2 դար)
Ռուբեն Գալչյանի անձնական հավաքածու, այժմ՝ Մատենադարանում

Ստրաբոն, մ. թ. ա 1-ին դար

Բրիտանացի քարտեզագետ Ջոն Մըրրին հիմնվելով Ստրաբոնի «Աշխարհագրություն» աշխատության վրա վերակառուցել է աշխարհի քարտեզը, որի մի գլուխը հատկացված է Հայաստանի աշխարհագրությանը:



Ստրաբոն, մ. թ. ա 1-ին դար Վերագծել է Կառլ Մյուլլերը:

Կլավդիոս Պտղոմեոս (2 դար)

Հույն նշանավոր աշխարհագրագետ և տիեզերագետ Կլավդիոս Պտղոմեոսը հին աշխարհի ամենանշանավոր քարտեզագետն էր: Նրա կարևոր աշխատությունը ութհատորանոց «Աշխարհագրությունն» է: Այս աշխատության մեջ Հայաստանին վերաբերող տեքստը 5-րդ հատորում է:

Սա աշխարհի քարտեզն է, որը շրջապատված է հողմերով և բաժանված է եղանակային գոտիների: Բացառությամբ Կարմիր ծովի, բոլոր ծովերը ներկված են կապույտով, իսկ լեռները կանաչ են: Մեծ ու Փոքր Հայքերը գտնվում են Սև և Կասպից ծովերի միջև:

Կլավդիոս Պտղոմեոս (2 դար) *Քարտեզը պատրաստել է Մարտին Վալդզեեմյուլլերը և տպագրել է Շոտտը 1513 թվականին:*
Բրիտանական թանգարան, Լոնդոն

Կլավդիոս Պտղոմեոս (2 դար)

Քարտեզի կենտրոնում սպիտակ գույնով ներկայացված է Մեծ Հայքը (Արմենիա Մայոր), որն արևելքում սահմանակից է Մարաստանին, հարավում՝ Ասորեստանին, արևմուտքում՝ Փոքր Հայքին (Արմենիա Մինոր), իսկ հյուսիսում՝ Կոլխիսին (Աբխազիա), Իբերիային (Վիրք) և Ալբանիային (Աղվանք):

Կլավդիոս Պտղոմեոս (2 դար) Վերակազմությունը՝ Նիկոլաոս Գերմանիոսի 1482 թ.
Բրիտանական թանգարան, Լոնդոն